

Հրատարակվում է

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ  
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ

SPONSORED BY  
THE COUNCIL OF EUROPE

**ASSOCIATION OF JUDGES OF THE REPUBLIC OF ARMENIA**

**EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS**

**COLLECTION OF JUDGMENTS**

*Edited by Alvina Gyulumyan*

Member of the Constitutional Court of the Republic of Armenia,

President of the Association of Judges of the RA

YEREVAN 2002

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**

**ՎՃԻՌՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

ՀՀ սահմանադրական դատարանի անդամ,  
ՀՀ Դատավորների միության նախագահ  
Ալվինա Գյուլումյանի ընդհանուր խմբագրությամբ

**ԵՐԵՎԱՆ 2002**

**Տպագրվում է ՀՀ Ղատավորների միության  
խորհրդի որոշմամբ**

**Խմբագիր**

**ՀՀ սահմանադրական դատարանի  
աշխատակազմի գլխավոր մասնագետ  
Լիանա Հակոբյան**

Վճիռներն անգլերենից թարգմանել են.

Լուսինե Պողոսյանը  
Մարինա Մխիթարյանը  
Կարինե Բալայանը  
Սոնա Հովհաննիսյանը  
Վահե Ենգիբարյանը  
Աննա Ղազարյանը

**ԴԱԼԲԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԳՈՐԾԸ**

**CASE OF DALBAN v. ROMANIA**

**Դատարանի 1999թ. Սեպտեմբերի**

**Վճիռը**

**Ստրասբուրգ**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, համաձայն թիվ 11 արձանագրությամբ փոփոխված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի («Կոնվենցիա») 27-րդ հոդվածի և Դատարանի կանոնակարգի համապատասխան դրույթների՝ նիստ գումարելով որպես Մեծ պալատ, հետևյալ կազմով՝ պրն Լ.Վիլդհաբեր՝ Նախագահ, պրն Ա. Պաստոր Ռիդրուեջո, պրն Լ. Ֆերարի Բրավո, պրն Զ. Մակարչիկ, պրն Պ. Կուրիս, պրն Ռ. Տուրմեն, պրն Զ.-Պ. Կոստա, տկն Ֆ. Տուլկենս, տիկ Վ. Ստրաժնիչկա, պրն Մ. Ֆիշբախ,

պրն Վ. Բուտկևիչ, տկն Հ. Ս. Գրև, պրն Ա.Բ. Բակա, պրն Ռ. Մարուստեպ,

պրն Ի. Լևց, տկն Ս. Բուսուչարովա, տկն Ռ. Բեստելիու՝ ad hoc դատավոր,

պրն Պ. Զ. Մահոնե՝ փոխքարտուղար

1999թ. հունվարի 8-ի, հունիսի 24-ի և սեպտեմբերի 9-ի դռնփակ խորհրդակցություններից հետո սեպտեմբերի 9-ին ընդունեց սույն վճիռը:

## ՎԱՐՈՒՅԹԸ

1. Գործը Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի կողմից (“Commission”) Դատարան է հանձնվել 1998թ. ապրիլի 27-ին՝ ինչպես նախատեսված էր Կոնվենցիայի նախկին 19-րդ հոդվածով, և տկն Ելենա Դալբանի կողմից ( դիմողի այրիի կողմից, որը մահացել էր 1998թ. մարտի 13-ին) 1998թ. մայիսի 5-ին՝ Կոնվենցիայի նախկին 32-րդ հոդվածի 1-ին կետով և 47-րդ հոդվածով նախատեսված եռամսյա ժամկետում: Սկզբում թիվ 28114/95 գանգատը՝ ընդդեմ Ռումինիայի, Հանձնաժողով էր ներկայացվել Ռումինիայի քաղաքացի Յոնել Դալբանի կողմից 1995թ. ապրիլի 20-ին՝ Կոնվենցիայի նախկին 25-րդ հոդվածին համապատասխան:

Ելնելով գործնական նկատառումներից, սույն վճռում պրն Դալբանը կանվանվի «դիմող», թեև որպես այդպիսին պրն Դալբանի փոխարեն հանդես կգա տկն Դալբանը (տես որոշումների և վճիռների ժողովածու՝

1996թ. նոյեմբերի 15-ին ընդունված՝ Ահմեթ Սադիկն ընդդեմ Հունաստանի որոշումը):

Հանձնաժողովի խնդրանքը հիմնվում էր Ռումինիայի վավերացրած՝ 9-րդ արձանագրությամբ փոփոխված նախկին 44-րդ և 48-րդ հոդվածների և այն հայտարարության վրա, որով Ռումինիան ճանաչել էր Ղատարանի պարտադիր իրավագործությունը (նախկին 46-րդ հոդված): Եվ Հանձնաժողովի, և դիմողի նպատակն՝ էր որոշել, թե արդյոք գործի հանգամանքները վկայում են պատասխանող պետության կողմից Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով և 10-րդ հոդվածով նախատեսված իր պարտավորությունների խախտման մասին:

2. Տկն Ղալբանը փաստաբանների միության անդամ պրն Բակետու Ի. Պոպային նշանակել էր որպես պաշտպան՝ իր շահերը ներկայացնելու համար (B Ղատարանի նախկին կանոնակարգի N 31 կանոնի 1-ին կետ): Տվյալ պահին Ղատարանի փոխնախագահ՝ պրն Թոր Վիլյամսոնը թույլատրել էր պրն Ի. Պոպին գրավոր ընթացակարգում օգտագործել ռումիներենը:

3. Պրն Թոր Վիլյամսոնը՝ որպես Պալատի նախագահ, որը սկզբնապես ձևավորվել էր (Կոնվենցիայի նախկին 43-րդ հոդված և նախկին 21-րդ կանոն) քննություն առնելու այն ընթացակարգային հարցերը, որոնք կարող էին ծագել մինչև 11-րդ արձանագրության ուժի մեջ մտնելը, գործելով Քարտուղարի միջոցով՝ խորհրդակցել էր

ռումինական կառավարության (Government) ներկայացուցիչ պրն Ա. Զիոբանու-Ղորդեայի, դիմողի պաշտանի և հանձնաժողովի պատվիրակ պրն Կ. Բիրսանի հետ՝ գործի գրավոր ընթացակարգի վերաբերյալ: Արդյունքում, սահմանված կարգի համաձայն Քարտուղարն ստացել է՝ 1998թ. հուլիսի 30-ին Կառավարության և 1998թ. օգոստոսի 31-ին՝ դիմողի գրավոր բացատրությունները:

4. 1998թ. նոյեմբերի 1-ին թիվ 11 արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո և նշված արձանագրության 5-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ գործն ուղարկվել է Ղատարանի Մեծ պալատ: Կոնվենցիայի 27-րդ հոդվածի 2-րդ կետի և Կանոնակարգի 24-րդ կանոնի 4-րդ կետի համաձայն Մեծ պալատում ի պաշտոնե (ex officio) դատավոր էր նշանակվել Ռումինիայից ընտրված դատավոր պրն Կ. Բիրսանը, Ղատարանի նախագահ՝ պրն Լ. Վիլդիաբերը, Փոխնախագահ՝ տկն Ե. Պալմը և բաժանմունքների փոխնախագահներ՝ պրն. Զ Կոստան և պրն Մ Ֆիշբախը

(Կոնվենցիայի 27-րդ հոդվածի 3-րդ կետ և 24-րդ օրենքի 3-րդ և 5-ի «ա» կետեր): Մեծ պալատի կազմում ընդգրկված էին պրն Ա. Պաստոր-Ռիդրուեխոն, պրն Ֆերարի Բրավոն, պրն Զ. Մակարչիկը, պրն Պ. Կուրիսը, պրն Ռ. Տուրմենը, տկն Ֆ. Տուկենսը, տկն Վ. Ստրաժնիչկան, պրն Վ. Բուտկևիչը, տկն Հ.Ս. Գրևը, պրն Ա. Բ. Բական, պրն Ռ. Մարուստեն և տկն Ս. Բուտուչարովան (24-րդ կանոնի 3-րդ կետ և 100-րդ կանոնի 4-րդ կետ): Հետագայում պրն Բիրսանը, որը

մասնակցում էր Հանձնաժողովում տվյալ գործի քննությանը, հրաժարվել է մասնակցել Մեծ պալատի նիստին (28-րդ կանոն), իսկ Կառավարությունը նիստին մասնակցելու նպատակով որպես ad hoc դատավոր նշանակել է տկն Ռ. Բեշտելիուին (Կոնվենցիայի 27-րդ հոդվածի 2-րդ կետ և 29-րդ կանոնի 1 կետ):

5. Նախագահը որոշում է ընդունել, որ կարիք չկա Հանձնաժողովին առաջարկել իր անդամներից որևէ մեկին լիազորել մասնակցելու Մեծ պալատում գործի վերաբերյալ լսումներին (Կանոնակարգի 99-րդ կանոն):

6. Կառավարության ներկայացուցչի և տկն Դալբանի պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո Մեծ պալատը որոշեց գործով դատաքննություն չիրակացնելու մասին:

7. 1998թ. դեկտեմբերի 22-ին՝ Կառավարության և 1998թ. դեկտեմբերի 16-ին դիմողի կողմից ստացվել են գործի վերաբերյալ լրացուցիչ դիմումներ: Ռումինիայի իշխանությունները Ղատարանին խնդրում էին դադարեցնել գործի դատաքննությունը՝ մինչև Ռումինիայի Գերագույն դատարանի կողմից որոշման ընդունումը, քանի որ վերջինիս կողմից դիմողին մեղավոր ճանաչելու և բողոքարկելու դեպքում որոշումն անփոփոխ թողնելու վերաբերյալ գանգատով դիմել էր Գլխավոր դատախազը:

8. Պահեստի դատավոր պրն Ե. Լևիսը փոխարինել է պրն Բոնելոյին, որը չէր կարող մասնակցել գործի հետագա քննությանը (24-րդ կանոնի 5-րդ կետի «բ» մաս):

9. 1999 թ. հունվարի 8-ին Մեծ պալատը դատաքննության կասեցման մասին որոշում էր ընդունել:

10. 1999թ. մայիսի 21-ին Կառավարության նոր ներկայացուցչից ստացվեց Գերագույն դատարանի՝ մարտի 2-ին կայացրած որոշման պատճենը: Նախագահի խնդրանքով 1999 թ. մայիսի 6-ին և հունվարի 1-ին համապատասխանաբար դիմողը և Կառավարությունը ներկայացրել էին իրենց դիտողությունները տվյալ որոշման վերաբերյալ:

11. Պահեստի դատավոր պրն Լ. Ֆերարի Բրավոն փոխարինել է տկն Պալմին, որը չէր կարող մասնակցել գործի հետագա քննությանը (24-րդ կանոնի 5-րդ կետի «բ» մաս):

## **ՓԱՍՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

## **ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ**

12. Cronica Romascanա շաբաթաթերթի հրատարակչության լրագրող և խմբագիր պրն Յոնել Դալբանը մինչև 1998թ. մարտի 3-ին վախճանվելը բնակվում էր Ռոման քաղաքում:

13. 1992թ. սեպտեմբերի 23-ին թիվ 90/1992 ամսագրում լույս է տեսել դիմողի՝ «Ռոմանի IAS-ի կողմից տասնյակ միլիոնների հասնող չափի խաբեությունը» վերնագրով հոդվածը: Հոդվածում նկարագրված էին խաբեությունների մի շարք դեպքեր, որոնք, իբր, կատարվել էին Ռոման քաղաքի Ֆաստրոմ (նախկինում IAS պետական տնտեսություն) Գ. Ս.-ի պետական գյուղացիական ընկերության տնօրենի կողմից: Որպես տեղեկատվության աղբյուր մեջբերելով Ռուսիկանության տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի բաժնի ղեկույցը՝ դիմողը, մասնավորապես, գրում էր . «... Ֆաստրոմ ընկերության ներսում (նախկին պետական գյուղացիական ընկերություն) բացահայտվել են աներևակայելի չափերի հասնող խարդախությունների նոր դեպքեր: Գլխավոր կասկածյալը տեղական կոմունիստական նոմենկլատուրայի արտոնյալ անդամ՝ պրն Գ. Տ.-ն է: Նրա պատճառած վնասը, ըստ ռուսիկանության տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի բաժնի տվյալների և փորձագետների գնահատման՝ կազմում է 23 000 000 ռուսիական լեյ: Խաբեությունը կատարվել էր ռուսիական Ֆաստրոմ ընկերության կենտրոնական պահեստի գրանցամատյաններում ֆոնդերի ընդգրկման միջոցով, որոնք անհետացել էին հսկողության տակ գտնվող գույքագրման ցուցակներից: Պարզվել էր, որ ֆոնդերի մեծ մասը փոխանակվել էր պրն Գ. Տ.-ի, նրա մտերիմների և ընտանիքի համար անհրաժեշտ ապրանքով կամ կանխիկացվել էր, որը նույնպես եղբայրաբար բաժանվել էր նրանց միջև:

Այս ամենը հիշեցնում է դարեր առաջ ապրող ավազակներին, որոնք նույնպես չէին ճանաչում ինչպես աստօճ, այնպես էլ մարդկային օրենքները (Jaf ca-n codru)! ...

Ռումինիայի հասարակությանը հետաքրքրում էր, թե ինչպես այս ամենը կարող էր տեղի ունենալ: Միգուցե սենատոր Ռ. Տ.-ն, որը մինչև այժմ Ֆաստրոնի խորհրդում պետության ներկայացուցիչն է, կկարողանա որևէ բացատրություն տալ: Չէ՞ որ այդ կարգավիճակում որպես աշխատավարձ նա ամսական հարուրավոր լեյ է վաստակել: Այժմ մենք գիտենք, թե ինչու, կամ ավելի ճշգրիտ՝ ինչպես էր նա պաշտպանում պետության շահերը:

14. Ամսագրի 1993թ. հունվարի 6-ի 104/1993 համարում հրապարակված հոդվածում դիմողը գրում էր. «Շուրջ մեկուկես տարի Ֆաստրոն ընկերությանը պատկանող «Ունիվերսալ» մակնիշի ավտոմեքենան՝ վարորդ Ռ.Մ.-ի հետ, հանգստյան օրերին տրամադրվում էր սենատոր Ռ. Տ.-ին՝ նրան Բակուի օդանավակայան տեղափոխելու նպատակով: Այս պրակտիկան կարծես ընդհատվել է, սակայն երբեք մոռացության չի մատնվում»:

15. Գ. Տ.-ն և Ռ. Տ.-ն դիմել են դատարան՝ Քրեական օրենսգրքի 206-րդ հոդվածի հիման վրա դիմողին մեղադրելով զրպարտչական բնույթի հոդված հրատարակելու մեջ:

16. 1994թ. հունիսի 24-ին Ռոման քաղաքի առաջին աստանի դատարանը (judicatoria) դիմողին մեղավոր է ճանաչել զրպարտության մեջ և պայմանականորեն դատապարտել երեք ամսվա ազատազրկման՝ պարտավորեցնելով վճարել 300 000 լեյ (ROL) Ռ. Տ.-ին և Գ. Տ.-ին, որոնք ներկայացրել էին վնասի հատուցման պահանջ: Ավելին՝ անորոշ ժամանակով դիմողին արգելված էր զբաղվել լրագրողական աշխատանքով:

17. Դատարանը գտել է, որ թեև Գ.Տ.-ի գործողությունների կապակցությամբ երկու անգամ իրականացվել էր քննություն, այնուամենայնիվ, 1990 թ. սեպտեմբերի 7-ին և 1992թ. դեկտեմբերի 10-ին դատախազությունը որոշում էր ընդունել, որ չկան նրան Քրեական օրենսգրքի 248-րդ հոդվածի հատկանիշներով, այն է՝ ընդհանուր (կորպորատիվ) գույքի յուրացման և իր պաշտոնեական դիրքը չարաշահելով՝ հանրության շահերին վնաս պատճառելու համար պատասխանատվության ենթարկելու հիմքեր (abuzul in serviciu contra intereselor obsteti): Ռ. Տ.-ի առնչությամբ դատավարության ընթացքում պարզվել էր, որ 1991 թ. հուլիսից մինչև 1992թ. հուլիսը Ռ.Տ.-ն՝ որպես պետական ներկայացուցիչների խորհրդի անդամ, ստացել է 55 000 ՌՕԼ (ROL), այլ ոչ թե հարյուր հազար լեյ վարձատրություն: Նաև պարզվել էր, որ համաձայն Սենատի որոշումների՝ «սենատորներին տրամադրվում է տրանսպորտի միջոցներ և քարտուղարի ծառայություն՝ վերջիններիս պարտականությունների կատարումը հեշտացնելու նպատակով», և

Նեամտիի շրջանի պրեֆեկտի գրասենյակից Ռոման ք. Ֆաստրոն  
ընկերությանն ուղղված թիվ 484911991 նամակով խնդրվել էր  
սենատորին տրամադրել ավտոմեքենա: Ղատարանը եզրակացրել էր,  
որ դիմողի պնդումը չի համապատասխանում իրականությանը:

18. Դիմողը բողոքարկել է այդ դատավճիռը: Նա պնդում էր, որ  
նստիկանության տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի  
բաժնի զեկույցներում, որոնք հիմք էին հանդիսացել Գ.Ս.-ին մեղադրելու  
համար, ինչպես նաև ֆինանսների նախարարության տեսուչների 1992  
թ. հունիսի 19-ի, 26-ի և դեկտեմբերի 18-ի հաշվետվություններում  
տնօրենների խորհրդի անդամների և արհմիության  
հայտարարություններում տեղեկություններ էին պարունակվում Գ. Ս.-ին  
վերագրվող ապօրինի ֆինանսական գործարքների մասին: Համաձայն  
այդ փաստաթղթերի՝ գումարների չափը գերազանցում էր 23 000 000  
ՈՕԼ-ը (ROL):

19. Անդրադառնալով Ռ.Տ.-ին, դիմողը նշել է, որ առաջին աստյանի  
դատարանը 1994թ. հունիսի 24-ի որոշմամբ հաստատել է Ռ.Տ.-ի  
կողմից Ֆաստրոն ընկերությանը պատկանող մեքենայի օգտագործման  
փաստը: Նա պնդել է, որ իր հայտարարությունները՝ Ռ.Տ.-ի  
աշխատավարձի վերաբերյալ, զրպարտչական չեն՝ ընդունելով, սակայն,  
այն, որ սխալվել էր գումարի ճիշտ չափը նշելու հարցում:

20. 1994թ. դեկտեմբերի 7-ին Նեմտի շրջանային դատարանը (tribunal județean) անփոփոխ է թողել 1994թ. հունիսի 24-ի դատավճիռը՝ ինչպես ազատագրկման, այնպես էլ փոխհատուցման վերաբերյալ: Նշելով, որ դատախազությունը երկու առիթներով Գ.Տ.-ի գործողություններում հանցադեպի հատկանիշներ չի գտել, դատարանն առանց քննության առնելու նաև դիմողի կողմից՝ ի արդարացումն իրեն ներկայացված ոստիկանության զեկույցը, գտել է, որ այն չի համապատասխանում իրականությանը: Դատարանը գտել է նաև, որ սենատոր Ռ.Տ.-ի մեքենայի օգտագործումն օրինական էր:

Միևնույն ժամանակ դատարանը որոշել է վերացնել լրագրողական աշխատանքով զբաղվելու արգելքը՝ հիմք ընդունելով «դիմողի դրական վարքագիծը գործի քննության ընթացքում»:

21. Դատավոր Մ.Ս.-ն ներկայացրել է հատուկ կարծիք, որում նշել է.

«Դեպքերի իրական պատկերի բացահայտումը հասարակության շահերի պաշտպանության գործում թերությունների վերացման կարևոր պայման է հանդիսանում: Այդ շահերն ավելի կարևոր են, քան որևէ մեկի համբավի ամեն գնով պաշտպանումը: Որպես ազգի ակտիվ գիտակցություն՝ լրագրողի իրավունքն ու պարտականությունն է հետևելու տարբեր կառույցներին ու նրանց ղեկավարներին՝ պարզելու համար, թե արդյոք նրանց աշխատանքը գոհացուցիչ է, արդյոք նրանք

չեն չարաշահում իրենց վստահված իշխանությունը և արդյոք չի վտանգվում նրանց համբավը: Ոչ ոք չի կարող պնդել, որ ինքն անթերի է, որովհետև ոչ ոք չի կարող այդպիսին լինել:

Ես կարծում եմ, որ լրագրող Յոնել Դալբանին դատապարտելն արդարացի չէ այն պատճառով, որ նա միայն ազնվորեն կատարել է իր պարտականությունները՝ նպատակ ունենալով բարելավել այն քաղաքում տիրող բարոյական մթնոլորտը, որտեղ նա ապրում և աշխատում է »...

22. Չնայած իր դատապարտմանը՝ դիմողը շարունակել է տեղեկություններ հրատարակել Գ.Տ.-ի կողմից կատարված խարդախությունների վերաբերյալ: Ավելին, նա չի վճարել Գ. Տ.-ին և Ռ. Տ.-ին պատճառած վնասի գումարը:

23. Մեր բացահայտումների արդյունքում ռումինական խորհրդարանի՝ չարաշահումների հարցերով հանձնաժողովը դիմել է Նեմտիի դատախազություն:

24. «Արդարադատության ժողովրդական միություն» ոչ կառավարական կազմակերպության կողմից ձեռնարկված միջոցների արդյունքում 1994թ. հուլիսի 20-ին ռումինական դատախազությունը Գ.Ս.-ի դեմ նոր գործ է հարուցել:

25. Դիմողի դատապարտումից հետո մյուս թերթերն էլ, մասնավորապես մեծ շրջանառություն ունեցող “Adevarul” ազգային

օրաթերթը, հողվածներ են տպագրել նշված խարդախությունների վերաբերյալ:

26. Շատ թերթերում դիմողի դատապարտումը ներկայացվել է որպես «մամուլին վախեցնելու փորձ»:

27. 1998թ. ապրիլի 24-ին Գլխավոր դատախազը դիմել է Գերագույն դատարան՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավճիռները հանցակազմի բացակայության հիմքով բեկանելու պահանջով:

28. 1999թ. մարտի 2-ին Գերագույն դատարանի որոշմամբ բավարարվել էր Գլխավոր դատախազի բողոքը: Ղատարանը գտել է, որ դիմողի՝ Գ. Տ.-ին զրպարտելու մեղադրանքի կապակցությամբ դատարանը նրան արդարացրել է այն հիմքով, որ նա գործել է բարեխղճորեն: Ռ. Տ.-ին զրպարտելու կապակցությամբ վերացրել է դատապարտումը և գտնելով, որ դիմողը ճիշտ էր դատապարտվել, որոշել է գործը կարճել դիմողի մահվան պատճառով:

## **II. ԳՈՐԾԻՆ ԱՈՆՉՎՈՂ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ**

29. Ռումինիայի քրեական օրենսգրքի հողվածները.

«Հոդված 206. Որևէ անձի վերաբերյալ հրապարակային հայտարարություն կատարելը, երբ հայտարարության ճշմարտացիության հաստատման դեպքում տվյալ անձը կենթարկվի քրեական, վարչական կամ կարգապահական տույժի կամ հասարակական պարսավանքի, պատժվում է 3 ամսից մինչև 1 տարի ժամանակով ազատազրկման կամ համապատասխան տուգանքի:

Հոդված 207. Նման հայտարարության կամ պնդման ճշմարտացիության ապացուցումը թույլատրելի է, եթե ճշմարտացիությունն ապացուցելու դեպքում վիրավորանքի կամ զրպարտության հանցագործություն տեղի չի ունեցել»:

30. Ռումինիայի քրեական դատավարության օրենսգրքի դրույթները նախատեսում են.

«Հոդված 385-9. Վերաքննիչ բողոք կարող է ներկայացվել հետևյալ դեպքերում. (10) եթե որոշմամբ հաստատված չէ մեղադրանքը, հաշվի չեն առնվել հավաքված ապացույցները կամ միջնորդությունները՝ կողմի իրավունքների պաշտպանության նպատակով, և դրանք կարող են ազդել գործի վերջնական արդյունքների վրա:

Հոդված 504 Մեղավոր ճանաչված յուրաքանչյուր անձ իրավունք ունի պահանջելու պետության պատճառած վնասները, եթե վերջնական որոշմամբ կհաստատվի նրա կատարած արարքի մեջ հանցակազմի կամ հանցադեպի բացակայությունը:

Փոխհատուցման ենթակա չեն այն անձինք, ովքեր նախաքննության կամ դատաքննության ընթացքում դիտավորյալ խոչընդոտել կամ փորձել են խոչընդոտել ճշմարտության բացահայտմանը:

Սույն հոդվածի 1-ին և 2-րդ ենթակետերում հիշատակված անձինք ազատագրկման կամ կալանավորման պահին աշխատանք ունենալու դեպքում ընդհանուր և անընդմեջ աշխատանքային ստաժի հաշվարկման իրավունք ունեն ազատագրկման կամ կալանքի ողջ ժամկետի ընթացքում:

Հոդված 505. 504 հոդվածում նախատեսված փոխհատուցման պահանջ կարող է ներկայացնել ցանկացած անձ, կամ նրա մահվան դեպքում՝ նրա ժառանգները, ովքեր տուժել են կորուստներից կամ պատճառված վնասներից:

Նման պահանջ կարող է ներկայացվել մեկ տարվա ընթացքում՝ սկսած մեղադրյալի արդարացման դատավճռի կամ գործը կարճելու մասին որոշման կայացման պահից»:

#### **Վարույթը Հանձնաժողովում**

31. 1995թ. ապրիլի 20-ին պրն Դալբանը դիմել է Հանձնաժողովին՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և 10-րդ հոդվածի հիման վրա

անարդար դատավարության և ազատ արտահայտվելու իրավունքի խախտման գանգառով:

32. 1996թ. սեպտեմբերի 9-ին Հանձնաժողովն ընդունելի է հայտարարել 28114/95 գանգառը: Հանձնաժողովն իր 1998թ. հունվարի 22-ի զեկույցում (Կոնվենցիայի նախկին 31-րդ հոդված) կարծիք է հայտնել միաձայն՝ 10-րդ հոդվածի խախտման վերաբերյալ, և անհրաժեշտ չի համարել քննել, թե արդյոք խախտվել է նաև 6-րդ հոդվածի 1-ին կետը (ձայների՝ 31 կողմ, 1 դեմ հարաբերակցությամբ):

#### **Ղատարան ներկայացված վերջնական բացատրությունները**

33. Տկն Ղալբանի պաշտպանը խնդրել է Ղատարանին ճանաչել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտման փաստը և իր վստահորդին տրամադրել փոխհատուցում 250 000 000 ՌՕԼ-ի (ՐՕԼ) չափով նյութական և բարոյական վնաս պատճառելու համար:

34. Կառավարությունը Ղատարանին խնդրել է դադարեցնել գործի քննությունը՝ պատճառաբանելով, որ մեղադրյալի այրին գործի հետագա քննության նկատմամբ անձնական շահագրգռություն չունի: Որպես այլընտրանք՝ Կառավարությունը պնդել է, որ այլևս չի վիճարկում Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտումը, սակայն խնդրել է Ղատարանին դադարեցնել գործի քննությունը՝ պատճառաբանելով, որ

1999թ. մարտի 2-ին Չերագույն դատարանը վերացրել է նշված խախտումը: 6-րդ հոդվածի 1-ին կետի կապակցությամբ Կառավարությունը խնդրել էր Ղատարանին այն համարել չխախտված, ինչպես նաև պահանջել է մերժել դիմողի պահանջները՝ 41-րդ հոդվածի վերաբերյալ:

---

---

## Իրավունքի հարցեր

### I. Վեճի առարկան

35. 1998թ. դեկտեմբերի 6-ին Ղատարանին ուղղված նամակում դիմողի պաշտպան պրն Պոպան դժգոհում էր գրասենյակը կողոպտելու և գործին վերաբերող փաստաթղթերի անհետացման կապակցությամբ: Նա նաև տեղեկացրել է, որ իր կողմից անձանոթ անձանց միջոցով Ղատարանին ուղարկված երկու նամակները տեղ չեն հասել:

36. Կառավարությունը նշել է, որ այս դժգոհությունները գործին չեն վերաբերում:

37. Քանի որ նշված հարցերը Հանձնաժողովում դիմողի գանգատի ընդունելիության հարցի վերաբերյալ լսումների ընթացքում չեն քննարկվել, ուստի և չեն համարվում գործի բաղկացուցիչ մասը: (տես

Յանովսկին ընդդեմ Լեհաստանի *mutatis mutandis* [GC] թիվ 25716/94 գործի 19-րդ կետը, ECHR 1999-I):

## II. Գործի քննությունը դադարեցնելու մասին խնդրանքը

38. 1999թ. հունիսի 1-ի դիմումով Կառավարությունը Ղատարանին խնդրել է դադարեցնել գործի հետագա քննությունը՝ պատճառաբանելով, որ դիմողի այրին այլևս գործի հետագա քննությամբ շահագրգռված չէ, ինչպես երևում է 1998թ. օգոստոսի 31-ի նրա գրավոր բացատրություններից (ինչը նա պնդում էր 1998թ. մայիսի 5-ի գանգատում):

39. Ղատարանը նշել է, որ դիմողը ռումինական դատարանի կողմից մեղադրվել էր զանգվածային լրատվության միջոցներով արված զրպարտության համար: Ղատարանը գտնում է նաև, որ պրն Ղալբանի այրին շահագրգռված է, որպեսզի հանգուցյալ ամուսնու նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը ճանաչվի որպես ազատ արտահայտվելու իրավունքին հակասող, ինչն էլ ակնկալում էր պրն Ղալբանը Հանձնաժողովին դիմելիս: Հետևաբար, Կառավարության խնդրանքը՝ գործի հետագա քննությունը դադարեցնելու վերաբերյալ, պետք է մերժվի: Ղատարանը տկն Ղալբանին ճանաչել է որպես դիմող կողմ՝ գործի հետագա քննության ժամանակ:

---

### III. Կոնվենցիայի 10-րդ հոդվածի վիճարկվող խախտումը

---

40. Ըստ դիմողի՝ զրպարտության համար իր դատապարտումը խախտել է նրա ազատ արտահայտվելու իրավունքը, որը երաշխավորվում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածով, մասնավորապես.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից:

Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության,

անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»:

#### **Ա. «Զոհի» կարգավիճակի կորուստը**

41. Ղատարանը նշում է, որ 1999թ. մարտի 2-ին Չերագույն դատարանի ընդունած որոշմամբ բավարարվել է Գլխավոր դատախազի ներկայացրած բողոքը և վերացվել են դատապարտումը և առաջին ատյանի դատարանի ու վերաքննիչ դատարանի դատավճիռները, որոնց վրա էր հիմնվում դիմողի՝ 10-րդ հոդվածով սահմանված ազատ արտահայտվելու իրավունքի խախտման վերաբերյալ գանգատը (տես վերը՝ կետ 28):

42. 1999թ. հունիսի 1-ի իր բացատրություններում Կառավարությունը նշել էր, որ Չերագույն դատարանը դիմողին արդարացրել է Գ.Ս.-ին զրպարտելու մեղադրանքի կապակցությամբ այն հիմքով, որ վերջինս գործել է բարեխղճորեն: Կառավարությունը գտնում է, որ նշված հանգամանքը, և նաև այն, որ դիմողի այրին ներպետական

քաղաքացիական օրենսդրության շրջանակներում կարող էր վերականգնել իր կորուստը, որը, ըստ Կառավարության՝ ենթադրում է Կոնվենցիայի հոդվածների «խախտումների հնարավոր ուղղում»։ Ուստի Կառավարությունը խնդրել է մերժել գանգատը՝ այն հիմքով, որ դիմողն այլևս չի կարող զոհ համարվել։

Սենատոր Ռ. Տ.-ին զրպարտելու առնչությամբ Կառավարությունը շեշտել է, որ Պերագույն դատարանը երկու մյուս դատարանների կողմից ընդունված որոշումները չեղյալ էր համարել և դիմողի մահվան պատճառով կարճել քրեական գործը։ Ըստ Կառավարության՝ Պերագույն դատարանի վերոհիշյալ որոշումը շտկել է 10-րդ հոդվածի խախտումը և «հարցի լուծումը թողել է Դատարանի հայեցողությանը»։

43. Տկն Դալբանի պաշտպանը Պերագույն դատարանի որոշումը բնորոշել է որպես «մեղադրական ակտ» հանգուցյալ դիմողի վերաբերյալ և Ռ. Տ.-ի վարքի «ակնհայտ արդարացում»։

44. Ամուուրն ընդդեմ Ֆրանսիայի գործով 1996թ. հունիսի 25-ին ընդունած վճռում Դատարանը կրկնել է, որ «դիմողի համար բարենպաստ որոշումը կամ միջոցներ ձեռնարկելը սկզբունքորեն բավական չեն վերջինիս «զոհի» կարգավիճակից զրկելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ներպետական մարմիններն ուղղակիորեն կամ ըստ էության ընդունում են իրենց կողմից Կոնվենցիայի դրույթների խախտման փաստը և վերականգնում

խախտված իրավունքը (Որոշումների ու վճիռների ժողովածու, 1996-III, 846 էջ, 36-րդ կետ):

Տվյալ դեպքում, եթե նույնիսկ Չերագոյն դատարանի՝ դիմողի դատապարտման վերացման վերաբերյալ որոշումը դիտարկենք որպես ազատ արտահայտվելու իրավունքի չարդարացված սահմանափակման փաստի ճանաչում, միևնույն է, Ղատարանը գտնում է, որ այն պատշաճորեն չի վերականգնել խախտված իրավունքը, ինչպես պահանջում է Ղատարանի նախադեպային իրավունքը: Թեև Կառավարությունը վկայակոչել է Քաղաքացիական օրենսգրքի 998, 999 հոդվածները և Քրեական դատավարության օրենսգրքի 505 հոդվածը (տես վերը՝ կետ 30), միևնույն է, պարզ չէ, թե ինչպես տկն Ղալբանը կկարողանար երբևիցե փոխհատուցում ստանալ: Քաղաքացիական օրենսգրքի հիման վրա հարուցված գործում, որը տեղիք կտար տկն Ղալբանի կողմից էական դատական ծախսերի, որին չէր առարկում նաև Կառավարությունը, պատասխանատվությունը կախված է մեղքի ապացուցումից: Ինչ վերաբերում է քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված հնարավորություններին, ապա՝ առաջին ատյանի դատարանի դատավճռից, վերաքննիչ դատարանի որոշումից, Գլխավոր դատախազի բողոքից և Չերագոյն դատարանի որոշումից հետո ողջամիտ չէ տկն Ղալբանի կողմից նոր դատական վարույթ հարուցելը, որի ելքն առնվազն անորոշ է:

Գերագույն դատարանի՝ Ռ. Տ.-ին առնչվող մեղադրանքի վերաբերյալ 1999թ. մարտի 2-ի որոշման եզրահանգումների կապակցությամբ Ղատարանը նշում է, որ դիմողի դատապարտումը եղել է ճիշտ, քանի որ նա մտադիր է եղել վնաս հասցնելու Ռ.Տ.-ին՝ մինչև հողվածի հրապարակումը չստուգելով տեղեկատվությունը (տես վերը՝ կետ 28): Վարույթի կարճումը սոսկ պայմանավորված էր պրն Ղալբանի մահվան փաստով: Հստակորեն, սա չի նշանակում, որ ներպետական մարմինները ճանաչել են Կոնվենցիայի 10-րդ հողվածի խախտման փաստը:

45. Ի վերջո, Ղատարանը գտնում է, որ դիմողի այրին կարող է պնդել, որ հանդիսացել է «զոհ»՝ Կոնվենցիայի 34-րդ հողվածի իմաստով:

#### **Բ.Գանգատի էությունը**

46. Անվիճելի, որ դիմողի դատապարտումն իրենից ներկայացնում է Կոնվենցիայի 10-րդ հողվածի 1-ին մասով նախատեսված ազատ արտահայտվելու իրավունքի նկատմամբ «հասարակական իշխանության կողմից միջամտություն»: Անվիճելի է նաև այն, որ միջամտությունը «նախատեսված էր օրենքով» և հետապնդում էր «այլոց համբավը պաշտպանելու» իրավաչափ նպատակ: Սրանով բացատրվում են միջամտության՝ 10-րդ հողվածի 2-րդ կետի համաձայն

արդարացման պահանջներից երկուսը: Այդ հարցերով Ղատարանի և հանձնաժողովի եզրահանգումները համընկնում են:

47. «Ժողովրդավարական հասարակությունում» միջամտության անհրաժեշտության կապակցությամբ Ղատարանը կրկնում է իր ձևավորած նախադեպային իրավունքն առ այն, որ այն կախված է ճնշող սոցիալական կարիքի առկայությունից, միջամտության և հետապնդվող իրավաչափ նպատակի համամասնությունից և նրանից, թե արդյոք ներպետական իշխանությունները, ի արդարացումն տվյալ միջամտության, ներկայացնում են բավարարելի հիմնավոր պատճառներ (տես *Բլադետ Տրոմսը* և *Ստենսասան ընդդեմ Նորվեգիայի* թիվ 21980/93 գործի 58-րդ կետ, ECHR. 1999-III գործը):

Ղատարանի խնդիրը չէ փոխարինել ներպետական դատարաններին, այլ 10-րդ հոդվածի հիման վրա գործի լույսի ներքո ներպետական դատարանների որոշումների վերանայումն է, որոնք վերջիններս ընդունել են իրենց հայեցողության շրջանակներում (տես *ibid*-ի 60 կետը և մյուս իշխանությունների մեջ *Ֆրեստզը* և *Ռուառեն ընդդեմ Ֆրանսիայի* [GC] N29183/95 ECHR 1999-1 գործի 45-րդ կետը ):

48. Այն հոդվածները, որոնց հրապարակման կապակցությամբ մեղադրանք էր առաջադրվել դիմողին, վերաբերում էին հասարակական հետաքրքրության խնդրի, այն է՝ պետական միջոցների կառավարմանը և քաղաքական գործիչների կողմից իրենց պարտականությունների

կատարման ձևին: Առաջին հոդվածում տեղ գտած տեղեկության աղբյուրը Ոստիկանության տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի բաժնի կողմից Ֆաստրոն ընկերության (որտեղ Պ. Տ.-ն հանդես էր գալիս որպես գործադիր տնօրեն, իսկ Ռ.Տ.-ն՝ պետության ներկայացուցիչ) գործունեության կապակցությամբ հետաքննվող գործի նյութերն էին: Երկրորդ հոդվածը վերաբերում էր սենատոր Ռ.Տ.-ի աշխատավարձի չափին և նրա կողմից ընկերության տրանսպորտային միջոցների օգտագործմանը (տես վերը՝ կետեր 13 և 14):

49. Դատարանի կողմից սույն գործի լուծման համար հիմնական կարևորության գործոնը ժողովրդական հասարակություն մամուլի էական գործառույթն է: Թեև մամուլը չպետք է անցնի սահմանները, մասնավորապես, հարգելով այլոց համբավը և իրավունքները՝ կանխելով գաղտնի տեղեկությունների բացահայտումը, այնուամենայնիվ, պետք է իր պարտավորություններին ու պարտականություններին համապատասխան կարգով տեղեկություններ ու գաղափարներ տրամադրի հասարակական հետաքրքրություն ներկայացնող ցանկացած հարցի վերաբերյալ: Ավելին, Դատարանը գտնում է, որ լրագրողների ազատությունը թույլ է տալիս հնարավոր չափազանցում կամ նույնիսկ սադրանք: Այսպիսի գործերում ներպետական իշխանությունների գնահատման շրջանակը պետք է սահմանափակվի ժողովրդավարական հասարակության շահով, որպեսզի հնարավորություն ընձեռվի մամուլին իրականացնելու իր

գործառույթները և իր «հասարակական պահապանի» դերը՝ լուրջ հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ տեղեկություններ տարածելիս (տես վերոհիշյալ Բլադեթ Թրոմսը և Ստեսասսի գործի 59-րդ կետը): Չի կարելի լրագրողին արգելել քննադատելու այն դեպքերում, երբ նա կարող է ապացուցել քննադատության իրավացիությունը (տես 1986թ. հուլիսի 8-ի Լինգենսն ընդդեմ Ավստրիայի որոշման, շարքեր Ա թիվ 103, 28 էջ, կետ 46) :

50. Դատարանը, ինչպես Հանձնաժողովը, գտնում է, որ ապացուցված չէ, որ հողվածում նկարագրված իրադարձությունները չեն համապատասխանում իրականությանը և նպատակաուղղված էին Գ.Տ.-ի և սենատոր Ռ.Տ.-ի դեմ գրպարտական քարոզարշավ սկսելուն: Պրն Դալբանը չէր անդրադարձել Ռ.Տ.-ի անձնական կյանքի հարցերին, այլ անդրադարձել էր նրա վարքագծին որպես որպես ժողովրդի կողմից ընտրված ներկայացուցչի (տես վերը՝ կետեր 13 և 14): Համաձայն ներպետական դատարանների՝ դիմողի կարծիքը սենատորի՝ որպես ընտրված ներկայացուցչի, գործունեության և պարտականությունների մասին, չէր համապատասխանում իրականությանը և կրում էր գրպարտչական բնույթ: Հիմնվելով դատախազության կարծիքի վրա, որ Գ.Տ.-ի գործողություններում բացակայում են հանցադեպի հատկանիշները, ներպետական դատարանները որոշել էին, որ հողվածում բերված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը: Դատարանը նման եզրակացության էր հանգել առանց

դիմողի կողմից ներկայացված ապացույցները հետազոտելու (տես վերը՝ կետեր 7 և 20):

51. Կառավարությունը չի առարկել Հանձնաժողովի այն եզրակացության դեմ, համաձայն որի՝ «նույնիսկ հաշվի առնելով լրագրողի պարտականություններն ու պարտավորությունները, որն իրականացնում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքը, դիմողին դատապարտելը չի կարող համարվել «անհրաժեշտ ժողովրդական հասարակությունում»:

52. Դատարանը նշելով այս փաստը որոշում է, որ դիմողին մեղավոր ճանաչելը և ազատազրկման դատապարտելը չի համապատասխանում լրագրողի արտահայտվելու իրավունքին միջամտելու արդյունքում հետապնդվող նպատակին: Հետևաբար տեղի է ունեցել 10-րդ հոդվածի խախտում:

#### **IV. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1 կետի վիճարկվող խախտում**

53. Դիմողը գանազտվել էր, որ խախտվել է իր գործի արդարացի դատաքննության իրավունքը, քանի որ դատարանը հաշվի չի առել ի պաշտպանություն իրեն ներկայացված ապացույցը, այն է՝ պաշտոնական փաստաթղթերը, որոնց հիման վրա գրվել էր իր հոդվածը (տես վերը՝ կետեր 17 և 20): Նա հիմնվում էր Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1 կետի

վրա, որի համապատասխան մասում ասված էր. «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են..... նրան ներկայացված քրեական մեղադրանքը, ունի դատարանի կողմից..... արդարացի..... դատաքննության իրավունք »:

54. Կառավարությունը Դատարանին խնդրել է ձանաչել, որ 6-րդ հոդվածի 1 կետի խախտում տեղի չի ունեցել այն հիմքով, որ «պրն Դալբանի փաստարկների ուղղակի վկայակոչման բացակայությունը» չի նշանակում, որ դրանք ընդհանրապես հաշվի չեն առնվել: Հակառակը, այն փաստը, որ «համապատասխան փաստաթղթերը կցված են գործին», ենթադրվում էր, որ դատավորներն ուսումնասիրել են դիմողի կողմից ներկայացված փաստաթղթերը:

55. Հաշվի առնելով Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտման վերաբերյալ արված եզրակացությունը՝ Դատարանը, ինչպես Հանձնաժողովը, անհրաժեշտ չի համարում գանգատը քննարկել 6-րդ հոդվածի 1-ին կետի տեսանկյունից:

## **V. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի կիրառումը**

56. Կոնվենցիայի 41-րդ հոդվածում մասնավորապես ասվում է. «Եթե դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն

մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի բավարարում է տրամադրում»:

#### **Ա.Վնասը**

57. Տկն Դալբանը պահանջում էր տրամադրել 250 000 000 ռումինական լեյ բարոյական վնասի համար, մասնավորապես, իր ամուսնու դատապարտման հետևանքով կորցրած հեղինակության համար և նյութական վնասի համար՝ պատճառված Cronica Romascană ամսագրի փակվելու հետևանքով: Նա նշել էր, որ «նշված գումարը նվազագույնն է և ուղղվելու է միայն ամսագրի վերահրատարակմանը», այլ ոչ թե իր անձնական կարիքներին:

58. Կառավարությունը ներկայացրել էր, որ, առաջին՝ պատճառական կապ չկա դիմողի պահանջների և նյութական վնասի միջև, երկրորդ՝ գումարն ամեն դեպքում չափազանցված է: Իսկ բարոյական վնասի առնչությամբ, Կառավարությունը պնդել է, որ 10-րդ հոդվածի խախտման փաստի ճանաչումն ինքնին հանդիսանում է արդարացի հատուցում: Այն վնասի կապակցությամբ, որն ըստ դատավճռի դիմողը պետք է վճարեր, Կառավարությունը կրկնել է, որ տկն Դալբանը կարող է դրա դիմաց

փոխհատուցում ստանալ քաղաքացիական դատավարության կարգով, և հաստատել է, որ այդ գումարը դեռևս չի վճարվել:

59. Ղատարանը համամիտ է Կառավարության հետ՝ նյութական վնասի կապակցությամբ: Այդուհանդերձ, բարոյական վնասի կապակցությամբ Ղատարանը գտնում է, որ դիմողին և նրա այրուն պատճառվել է նման վնաս, և որ միայն խախտման փաստի հավաստունը բավարար հատուցում չէ: Տվյալ դեպքում այն փաստը, որ պրն Ղալբանը մահացել է մինչև Քլխավոր դատախազի բողոքի ներկայացումը Պերագույն դատարան կարող է օգնել վնասի գնահատմանը: Նկատի ունենալով Ռումինիայում տարադրամի արժեզրկման բարձր տոկոսը, Ղատարանը վճռել է, որ գումարը պետք է տրվի ֆրանսիական ֆրանկով (FRF), որը փոխարկելի է ռումինական լեյի՝ վճարման օրվա կուրսին համապատասխան: Ղատարանը տկն Ղալբանին տրամադրում է 20 000 ֆրանսիական ֆրանկ: Ի վերջո, Կառավարության երրորդ փաստարկի կապակցությամբ Ղատարանը սահմանափակվում է նշելով, որ տկն Ղալբանը չէր պահանջել խնդրո առարկա այն վնասների փոխհատուցում, որոնք երբևէ չեն վճարվել (տես վերը՝ կետ 22):

## **Բ. Ծախսեր և ծախքեր**

---

60. Դիմողին իրավաբանական օգնություն էր տրամադրվել և Հանձանաժողովի և Դատարանի կողմից, և նրա այրին չի պահանջել լրացուցիչ փողհատուցում կրած ծախսերի համար:

#### **Գ. Տոկոսներ՝ փոխհատուցումը չվճարելու դեպքում**

61. Դատարանն անհրաժեշտ է համարում ընդունել սույն վճռի կատարման պահին Ֆրանսիայում կիրառելի՝ օրենքով սահմանված տոկոսադրույքը, այն է՝ տարեկան 3.47%:

Այս հիմքերով՝ Դատարանը միաձայն.

1. Վճռում է, որ դիմողի փոխարեն դիմողի այրին իրավունք ունի մասնակցել գործի հետագա քննությանը,

2 Վճռում է, որ դիմողի այրին կարող է հավակնել լինելու «գոհ»՝ Կոնվենցիայի 34-րդ հոդվածի իմաստով,

---

3.Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում,

---

4. Վճռում է, որ չկա Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-կետի հիման վրա գործը քննելու անհրաժեշտություն,

5. Վճռում է, որ`

ա Պատասխանող պետությունը եռամսյա ժամկետում դիմողի այրուն պետք է վճարի 20 000 ֆրանսիական ֆրանկ, որը փոխարկելի է ռումինական լեյի` վճարման օրվա կուրսին համապատասխան,

բ տարեկան 3.47% սովորական տոկոսադրույք պետք է վճարվի վերը նշված եռամսյա ժամկետը լրանալուց հետո` մինչև գումարի վճարումը,

6.Մերժում է դիմողի` արդարացի բավարարման մնացած մասը:

Կատարված է անգլերենով և ֆրանսերենով, և հրապարակվել է Մարդու իրավունքների պալատում, Ստրասբուրգում, 1999 թ. սեպտեմբերի 28-ին:

Փոլ Մահոնի

Լուզիուս

Վիլդհաբեր

---

Քարտուղարի տեղակալ

Նախագահ

---